Գիւղիս քաւշանը նման Խաչլուայ ի հարաւ հակեալ է, լեռնային մասն իսկ ունի դաշտային ընդարձակ տարածութիւն ևն, որ կը ձգուի ի հարաւէ Աշխալի և Ֆէրան գիւղօրէից սահմաններն, ի հիւսիսէ Աղբուլախ լեռներն, արևելքէ և արևմուտքէ երկու գետերն Ամատ գ. յարևմտից, Սխտայ գ. յարևելից:

Գիւղս ունի 113 տուն Հայ բնակիչ, մի փոքր անշուք փայտաշէն եկեղեցի, մի քահանայ Տէր Յարութիւն անուամբ, չունէին ուսումնարան, սակայն նոր հաստատուեցաւ. գիւղացիք մեծաւ մասամբ աղքատ վիճակի մէջ են. 70—80 երիտասարդներ պանդխտութեան մէջ կը հեծեն:

Գիւղս ունի 4 ջրաղաց, երկու առևտրական կրպակ, ունի ընտիր աղբիւրներ, 1/4 ժամ դէպ հիւսիս ձորակի եզրը Նորելուկ[1] անուամբ մի փոքր ծառաստան կայ, որ ուխտատեղի է, գիւղի արևելք բարձր գիրքի վերայ մի ցասման[2] խաչ կայ կանգնած: Սորա 1/4 ժամ յարևելս հիւսիս կայ մի աւերակ գիւղի վայր, Քերխանի ձորի ստորոտն, որ այժմ այր է. այս տեղ գտնուած են տապանաքարեր, խաչ քարեր, նաև մի Պաժտրդ քարէ[3] նշխարքի տիպ, որոյ վերայ գեղեցիկ քան-

---

1, Բագրեւանդայ մէջ քանի վայրեր տեսնուած հազուագիւտ ծառաստաններուն (ուռի) ժողովուրդը Նորելուկ կասէ եւ յարգանք կը մատուցանէ, թէ եւ ուխտավայրի մի նշան չկայ. թերեւս անտառապաշտութեան մնացած է հայոց մէջ:

2, Բագրեւանդայ շատ մի գիւղերու մօտ բարձր դիրքի վերայ տեսած եմ մեծ խաչ արձաններ, որոց գիւղացիք Սասման խաչ կասեն, որ լինելու է ցասման խաչ, արդէն երբ երաշտ լինի, զոհ կը մատուցանեն եզ, կով, ոչխար, եւն. նախ քահանայն կօրհնէ աղը, կը կերցնեն անասնոց, ապա կը զոհեն, կրկին կօրհնեն կուտեն որոց կասեն Սասման ժամ:

3. Մոխրագոյն շատ անգամ եւս խատուտիկ գոյնով, ողորկ եւ դիւրին փորագրելի մի քար է, կը լինի նաեւ սեւ, դեղնագոյն որք քիչ անգամ կը գտնուին: